ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ներկայ № 3 լոյս է տեսնում ամսիս 25-ին։ «Մուրճ»-ի ներկայ № 3 աշխատեցինք լոյս ընծայել վաղօրօք, Զատկայ տօներից առաջ։ Այդ պատճառով մենք ստիպուեցինք յետաձգել մի քանի յօդուածներ, որ պէտք է տեղ բռնէին ներկայ համարում, ի միջի այլոց և պ. Մաղաքեանի յօդուածի շարունակութիւնը, որ ստացուած է։

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ խնդրում ենք որ իրանց ձեռագրերի մէջ մեծ ուշադրութիւն դարձնեն մանաւանդ մի քանի տառերի որոշ գրութեան վերայ, ինչպէս են՝ ե և է, ղ, չ և ջ, ո և օ, մանաւանդ օտար անունների մէջ։

ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ամսիս 14-ին ունեցաւ իւր տարեկան նիստը, ուր կարդացուեց տեղեկագիրը և կատարուեցին հերթական ընտրութիւնները։ Քուէարկուեցին և ընտրուեցին՝ նախագահ վարչութեան՝ պ. Ալ. Քալանթար (վերընտրուած), փոխ-նախագահ՝ բժ. Լոռու-Մելիքեան, (պ. Ս. Ջելինսկու տեղ) գրապահ պ. Շաումեան, (պ. Յ. Քոչարեանի տեղ) քարտուղար պ. Յովհ. Ստեփանեան (պ. Տէր-Աւետիքեանի տեղ)։

Խմբագրական մասնաժողովի անդամներ քուէարկուեցին և ընտրուեցին՝ պպ. Ղազարոս Աղայեան, օր. Յակոբեան, և պ. Լունկևիչ (պպ. Լեոն Սարգսեանի, Արշակ Բարխուդարեանի և Խ. Մալումեանի տեղ)։

Ընկերութիւնը անցած տարում (1892 թ. մարտի 20-ից մինչ 1893 թ. յունու. 1-ը տպագրել է 11 ձեռագիր կամ արտատպութիւններ։

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻ ՆԿԱՐԱԳԻՐ կարող է ծառայել այն արձանագրութիւնը, որ տպուած է Ս. Էջմիածնի «Արարատ» ամսագրի փետրուարի տետրում, ուսումնական-վարչական յանձնաժողովի, փետր. 15—16, 1893 թ. կայացած նիստի մասին։ Արձանագրութիւնը բռնում է տպած 16 էջ և

վերաբերում է Գանձակ քաղաքի Ս. Յովհաննէս Մայր եկեղեցու տղայոց և օրիորդաց դպրոցների հոգաբարձութեան, որը բողոքած է եղել ամենապատիւ Տէր Տեղակալին 1) ընդդէմ թեմական վերատեսուչ հայր Գեղամեանի, 2) ընդդէմ յիշեալ դպրոցների աւագ ուսուցիչների՝ պպ. Միքայէլ Սահակեանի և Արշալոյս Մխիթարեանի, 3) ընդդէմ նոյն եկեղեցու երեցփոխան պ. Նաբաթեանի։

Ուսումնական-վարչական յանձնաժողովի քննութիւնը ցոյց է տալիս, թէ որ աստիճանի սանձարձակութեամբ է վարւում եղել յիշեալ դպրոցների հոգաբարձութիւնը դէպի ուսումնարանի պաշտօնատար անձերը և որքան նա կոյր կիրք է խառնում եղել իւր յարաբերութիւնների մէջ դէպի նոցա։ Առաջ ենք բերում յանձնաժողովի քննութեան եզրակացութիւնը։

«Ամբողջ գործից երեւում է, որ հոգաբարձութեան սուր յարաբերութիւնը դէպի աւագ ուսուցիչները, թեմական վերատեսուչը և գանձապահ հոգաբարձուն և ամբողջ գործը իւր մէջ պարունակող խնդիրներով, ծագել է և ոչ թէ դպրոցները բարեկարգելու ձգտումներից, այլ անձնական հաշիւներից, որոնց մէջ ամենագլխաւոր դերը կատարել է հոգաբարձութեան նախագահը, (Գրիգոր քահանայ Թումանեանց) ձգտելով վրէժ լուծելու նոյն իսկ ի վնաս հիմնարկութեան այն անձերից, որոնք չեն համակերպւել նորա ապօրինի պահանջներին և մասնաւոր շահերին»։

«Արարատի» խմբագրութիւնը, տպելով իւր էջերում այս անգամեայ նման արձանագրութիւններ, վերին աստիճանի կրթիչ դեր է կատարում։

ՐԱՖՖԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ *Թէհրանում։ Յիշեալ Ընկերութիւնից ստացանք տարեկան հաշիւը* 1892 *թ. համար, որից երեւում է թէ մուտք եղել է* $914,_{84}$ *պարսկական ղրան և ծախք՝* $904,_{47}$ *ղրան։ Ընկերութեան ծախքը եղել է գրեթէ բացառապէս ընթերցարանի վերայ։ Օգտւում ենք դէպքից յիշեցնելու Ընկերութեան, որ «Մուրճ»-ի խմբագրութիւնը, զիջելով ընկերութեան խնդիրքին նւիրել է նրան թէ «Մուրճ»-ի բոլոր համարները,* 1889—92 *թ. եթէ «Մուրճ»-ի բոլոր հրատարակութիւններից մի-մի օրինակ, մինչդեռ հաշւի մէջ այդ մասին յիշատակութիւն կայ միայն* 1892 *թ. «Մուրճ»-ի մասին։*

ԱՐԻՍՏԱԿԷՍ *եպ.* ՍԵԴՐԱԿԵԱՆ, *անդամ Սինոդի, Ներկայ ամսին* 23-*ին ժամանեց Թիֆլիս առանձին գործերով։ Լրագիրների մէջ*

տպւած լուրը, թէ Սինոդի անդամ Սարգիս եպիսկոպոսը նշանակւած է Թիֆլիսի թեմի կառավարիչ՝ չի հաստատւում։

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐ՝

1) ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆ, Սահակ.—Կաշկանդւած սէր (վէպիկ Արձախի կեանքից).—Թիֆլիս, տպ. «Արօր» Նազարեանի, 1893, գինն է 10 կոպէկ։

2) ՌԱՄԱԼԵԱՆՑ, Ս.—Ծովինար (հեքիաթ)։ Երկրորդ տպագրութիւն, Թիֆլիս, տպ. Յովհ. Մարտիրոսեանցի, 1893, գինն է 20 կ.։

3) ՇԱՆԹ.—Լեռան աղջիկը (քերթւած)։ Արտատպած «Ցարազից»։ Հրատ. Դ. Միրզոյեանի և Ս. Լիսիցեանի։ Թիֆլ., տպ. Վարդ. Հրատ. Ընկ., 1893, գինն է 10 կոպ.։

4) ՊՈՕՇԵԱՆՑ, Պերճ.—Սկիզբն երկանց (վէպ)։ Հրատ. «Աղբիւր և Ցարազ» հանդէսների։—Թիֆլիս, տպ. Արօր Տ. Նազարեանի, 1892, գինն է 1 ռ. 20 կոպ.։

5) ԹԱՂԻԱԴԵԱՆՑ, Մեսրովբ Դաւթեան։—Նղերերգութեան չորսաս թանկալ թաղիաղեանց, արար հեղինակ քնարի Սիրհարի 1837.—Հրատարակութիւն Յովհ. Շահնազար Սարգսեանի, Նոր Ջուղայեցւոյ, ծանօթութիւններով Յովհ. քահանայ Մկրտչեանի։—Թիֆլիս, տպ. Շարաձէ, 1893, գինն է 40 կոպ.։

6) ՄԿՐՏԻՉԵԱՆ, Լեոն.—«Ամուսնական խնդիրներ»։ Մասն Ա.—Մնողք և զաւակունք։ Հրատ. Զարդարեան գրատան, Կոստանդրուպոլիս, տպ. Ն. Արամեան, 1893 թ., գինն է 50 փարա։

7) ՆՈԻՊԱՐԵԱՆ, Մեսրոպ.—«Բառարան ֆրանսերէնից-հայերէն»։ Կոստանդնուպոլիս, տպ. Գ. Պաղտասլեան, 1892 թ.։

8) TER-MOWSESIANTZ, derzeit professor in Etschmiadzin.—Das armenische Bauernhaus.—Ein Beitrag zur Culturgeschichte dur Armenierg.-Mit 55 Texl-Illustrationen. Wien, 1892. Im Sebstverlage der Anthropologischen Gesell chaft.

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ